ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային հանրությունը վերջին 1-2 տարվա ընթացքում հայտնվել է ճգնաժամային խոր իրավիճակում, որի հիմնական պատճառը նոր համավարակն է: Այս ճգնաժամին բնորոշ են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական ազդեցությունները: Վերջինս համատարած լոքդաունի արդյունքն էր, ինչն էլ, բացի տնտեսական խնդիրներից, հանգեցրեց նաև հասարակության սոցիալական մեկուսացվածության և որոշակի ազատությունների սահմանափակման: Այս համատեքստում, համավարակի հետևանքով առաջացած համաշխարհային ճգնաժամն իր բնույթով տարբերվում է անցյալում մարդկության առջև ծառացած սպառնալիքներից՝ հաշվի առնելով, որ ներառում է բազմաբնույթ՝ տնտեսական, սոցիալական, բարոյա-հոգեբանական խնդիրներ:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել անցյալ դարերի տնտեսական ճգնաժամերի և սպառնալիքների վերաբերյալ տեսական մոտեցումների քննական վերլուծությանը, տրվել է դրանց ամփոփ գնահատականը: Միաժամանակ, վերլուծվել և ներկայացվել են միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների փորձագետների և տեսաբանների կարծիքները, որոնք առնչվում են ներկա աղետաբեր ճգնաժամին:

Հիմնաբառեր: *Համաշխարհային տնտեսություն, համավարակ, սպառնալիքներ, տնտեսական ճգնաժամեր, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ*

JEL: F00, F49
DOI: 10.52174/1829-0280_2021_3_98

Ներածություն: Համաշխարհային տնտեսության ձևավորման և զարգացման ողջ ընթացքում մարդկության առջև ծառացած են եղել մի շարք սպառնալիքներ, որոնց պատմականորեն տրվել են տարբեր բնութագրեր: Այդ սպառնալիքները չեն դադարել գոյություն ունենալ նույնիսկ 21-րդ դարում, երբ համաշխարհային տնտեսակարգում տեղի են ունեցել բազմաթիվ՝ թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական փոփոխություններ: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները կայուն տնտեսական աճի և բնակչության բարեկեցությունն ապահովող միջոցառումների իրականացման ընթացքում մշտապես բախվել և բախվում են տնտեսական, բնապահպանական, աշխարհաքաղաքական, սոցիալական, տեխնոլոգիական, համաճարակային, պատերազմական և այլ տիպի ռիսկերի: Ներկայում համաշխարհային հանրությունը փորձում է էլ ավելի մեծ ջանքեր գործադրել նման սպառնալիքները հնարավորինս վերացնելու, ինչպես նաև դրանց հետևանքները նվազեցնելու կամ մեղմելու ուղղությամբ:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և քննարկել անցյալի խոշոր տնտեսական ճգնաժամերի և սպառնալիքների առաջացման պատճառները և բնույթը, ինչպես նաև դրանք համեմատել 2020 թվականին կորոնավիրուսային համավարակով պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ:

Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային տնտեսությունը առերեսվել է այնպիսի մասշտաբային սպառնալիքների հետ, ինչպիսիք են 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի «ալիքները» պարբերաբար տարածվում և ճգնաժամին հաղորդում են պերմանենտ բնույթ, ինչպես նաև COVID-19-ով պայմանավորված ճգնաժամը, որը Երկիր մոլորակը ենթարկեց նոր ցնցումների՝ ուղեկցվելով հսկայական մարդկային կորուստներով, տնտեսությունների համատարած անգործությամբ, ձեռնարկությունների հարկադրված պարապուրդով, տնտեսական անկմամբ և համավարակի հաղթահարման ժամկետների անորոշությամբ:

Գրականության ակնարկ: Աշխարհում տեղի ունեցած բազմաթիվ ճգնաժամերի ազգային, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակով հետևանքների գնահատումը միշտ եղել է գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական շատ տնտեսագետ գիտնականներ իրենց գիտական հետազոտություններում որոշակիորեն անդրադարձել են տնտեսության առջև ծառացած սպառնալիքների գնահատմանը:

Տնտեսագիտական մի շարք տեսություններ ստեղծվել են պատմական տարբեր իրադարձությունների ազդեցության ներքո, և տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցող երևույթներն իրենց հետքն են թողել դրանց ձևավորման ու զարգացման վրա: Տնտեսական ճգնաժամերի և սպառնալիքների վերաբերյալ տեսությունները տվյալ իրադարձությունների ազդեցության նկարագրության վառ օրինակ են:

Ըստ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ֆիլիպ Քեյի՝ առաջին «ֆինանսական» ճգնաժամը[1] տեղի է ունեցել մ.թ.ա. 88 թվականին՝ Հռոմեական

---

[1] Տե՛ս **Kay Philip**, Rome's Economic Revolution, [Oxford studies on the Roman economy], Oxford: University Press, 2014,

կայսրությունում, սակայն, մեր կարծիքով, դժվար է դա համարել համաշխարհային մասշտաբի ճգնաժամ, թեպետ այդ տարիներին Հռոմեական կայսրությունը համաշխարհային տնտեսության «գերխաղացող» էր համարվում:

Տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչները՝ Սիսմոնդին, Ռոդբերտուսը, Մարքսը, Միլը, Մալթուսը, Չոմերսը, Կիրխմանը, Քեյնսը և այլք, իրենց աշխատություններում անդրադարձել են տնտեսական ճգնաժամերին և փորձել բացատրել վերջիններիս բնույթը և առաջացման պատճառները:

Տնտեսության առջև ծառացած սպառնալիքների և տնտեսական ճգնաժամերի առաջացման համակարգային խնդիրների մասին առաջին ակնարկները հանդիպում են շվեյցարացի տնտեսագետ և պատմաբան Ժան Չարլզ Լեոնարդ դե Սիսմոնդիի վերլուծությունում[2]: Սիսմոնդին 1815–1818 թվականների ճգնաժամերից հետո նշել է, որ տնտեսական ճգնաժամերը փոխկապակցված են ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսության հետ՝ դրանով իսկ հակադրվելով առանձին տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շահերի ներդաշնակությունն ու ազատ մրցակցության առավելություններն առաջ մղող դասական դպրոցի տեսակետին:

Կառլ Մարքսը ճգնաժամերին վերաբերող իր տեսությունը համարել է իր ունեցած ամենաէական տեսական ձեռքբերումը[3] և վերջինիս համար որպես հիմք է ընդունել Սիսմոնդիի տեսական պատկերացումները: Ըստ Մարքսի՝ ճգնաժամը «շահույթի մակարդակի նվազման միտման օրենքն» է՝ միակցված տարբեր հակադիր ազդեցությունների քննարկմամբ, որոնք կարող են փոփոխել վերջինիս ազդեցությունը: Այս տեսական գործոնների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ սրանցից ոչ մեկի ծագումը բնական կամ արհեստական չէ. սկիզբ է առնում կապիտալիզմի համակարգային տարրերից՝ որպես արտադրության միջոց և հիմնական սոցիալական համակարգ: Կառլ Մարքսը կարծում է. «Կապիտալիստական արտադրության իրական խոչընդոտն ինքնին կապիտալն է»[4]: Շահույթի նվազող մակարդակի օրենքը Մարքսի կողմից նկարագրված է որպես «երկկողմանի օրենք, որը նույն պատճառներով հանգեցնում է շահույթի մակարդակի նվազմանը և միաժամանակյա աճին»[5]: Այլ կերպ ասած՝ աշխատանքի արտադրողականության աճը կապիտալիզմի զարգացման պայմաններում դրսևորվում է մի կողմից՝ շահույթի մակարդակի պրոգրեսիվ անկման միտումով, մյուս կողմից՝ համապատասխան ավելցուկային արժեքի աճով այնպես, որ, ընդհանուր առմամբ,

---

https://www.researchgate.net/publication/277650696_PHILIP_KAY_ROME'S_ECONOMIC_REVOLUTION_OXFORD_STUDIES_ON_THE_ROMAN_ECONOMY_OXFORD_UNIVERSITY_PRESS_2014

[2] Տե՛ս **Rubin Isaac Illyich,** Sismondi as a Critic of Capitalism, Chapter 37 in A History of Economic Thought, InkLinks, London: **Sismonde de Sismondi J. C. L.,** New Principles of Political Economy: Of Wealth in Its Relation to Population Trans. Richard Hyse 1991 Transaction Publishers, Rutgers - The State University, New Brunswick, New Jersey, 1979:

[3] Տե՛ս **Rosdolsky Roman,** The Making of Marx's Capital, 1980, էջ 381: **Schumpeter Joseph A.**, History of Economic Analysis, Allen & Unwin, 1954, էջ 651:

[4] **Karl Marx**, Capital, Vol. III, Part III,The Law of the Tendency of the Rate of Profit to Fall, Chapter 15. Exposition of the Internal Contradictions of the Law, https://www.marxists.org/archive/marx/works/1894-c3/ch15.htm

[5] **Karl Marx,** Capital III, էջ 258:

փոփոխական կապիտալի և շահույթի համեմատական նվազումը ուղեկցվում է վերջին երկուսի բացարձակ աճով[6]:

Ինչպես Միլի, այնպես էլ Մարքսի աշխատություններում շահույթի նվազող հատույցի էֆեկտը համարվում է երկարաժամկետ գործընթաց «աշխատանքի վրա հակազդող ազդեցությունների պատճառով, ինչն էլ խափանում է օրենքի ընդհանուր տրամաբանությունը՝ դրան հաղորդելով միտման բնույթ»[7]:

Մարքսիստական ուսմունքի որոշ հետևորդներ կարծում են, որ տնտեսական ճգնաժամերն անխուսափելի են, և աստիճանաբար ավելի են խորանալու վերջիններիս հետևանքները, քանի դեռ արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի զարգացման միջև եղած անհամապատասխանությունից բխող հակասությունները չեն հասել վերջնական կետի՝ իրենց ղեկավարման որակով, տարբեր սոցիալական դասերի գիտակցական մակարդակի բարձրացմամբ և բնորոշ այլ սուբյեկտիվ գործոններով: Այսպիսով՝ համաձայն այս տեսության, «կատարյալ» շուկայական մեխանիզմներում միջամտության համար անհրաժեշտ «կարգավորման» աստիճանն ավելի ու ավելի կմեծանա, քանի որ ժամանակը, որտեղ կապիտալիստական կարգը արտադրական ուժերի զարգացման պրոգրեսիվ գործոն է, կնահանջի:

Ճապոնացի տնտեսագետ Սամեզի Կուրուման 1929 թ. իր «Ճգնաժամի ուսումնասիրության ներածություն» աշխատությունն ավարտում է՝ ամփոփելով. «....իմ կողմից «ճգնաժամային տեսություն» հասկացության կիրառումը չի սահմանափակվում տնտեսական ճգնաժամի տեսությամբ»[8]: Բնականաբար, այս հասկացությունը ներառում է նաև «իմպերիալիստական համաշխարհային պատերազմի» անհրաժեշտության ուսումնասիրությունը՝ որպես ժամանակակից կապիտալիզմին հատուկ հակասություն: «Իմպերիալիստական համաշխարհային պատերազմն» ինքնին բացահայտ ճգնաժամ է՝ իր բոլոր դրսևորումներով: Հետևաբար՝ իմպերիալիզմի տեսությունը պետք է դիտարկել որպես ճգնաժամի տեսության շարունակություն[9]:

Լեհ տնտեսագետ և պատմաբան Հենրիկ Գրոսմանը 1929 թ. վերաձևակերպել և հրատարակել է Մարքսի տեսության համար առանցքային կարևորություն ունեցող տարրերի մասնակի մաթեմատիկական մշակումը:

Ի տարբերություն մարքսիստական և դասական տնտեսագիտության՝ քեյնսյան տնտեսագիտությունը փորձում է տնտեսական ճգնաժամերի և տնտեսությունների առջև ծառացած սպառնալիքների խնդիրը լուծել պետական ակտիվ քաղաքականության և ջանքերի գործադրման միջոցով՝ շուկաներում առաջացած հիմնահարցերը կարգավորելով պետական միջամտության գործիքակազմով:

Մարքսիստներն ու քեյնսականները տնտեսական ճգնաժամի հայեցակարգը դիտարկում են լիովին տարբեր և հակադիր եղանակներով[10]: Ավստ-

---

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 261:

[7] Նույն տեղում, էջ 272:

[8] **Samezō Kuruma** (1929), https://www.marxists.org/archive/kuruma/crisis-intro.htm

[9] Տե՛ս նույն տեղը:

[10] Տե՛ս **Mattick Paul,** The Limits of the Mixed Economy, part 2. Marx & Keynes. 1969, https://www.marxists.org/archive/mattick-paul/1969/marx-keynes/ch02.htm

րիացի տնտեսագետ Յոզեֆ Շումպետերը իր «Տնտեսական վերլուծության պատմություն» աշխատությունում (1954 թ.), վերլուծելով տնտեսական ճգնաժամերի վերաբերյալ տարբեր դպրոցների մոտեցումները, նշում է, որ քեյնսյան մոտեցումը նկարագրում է տնտեսական հավասարակշռված պարբերաշրջանների «վերելքը կամ բումը» և «անկումը», իսկ Մարքսը տնտեսական ճգնաժամը դիտարկել և տեսականորեն նկարագրել է որպես կապիտալիստական արտադրական հարաբերությունների դինամիկայից բխող հակասությունների անհրաժեշտության զարգացում[11]:

Ամերիկացի տնտեսագետ Մայքլ Պորտերի՝ 1991 թ. հրատարակված «Ազգերի մրցակցային առավելությունները» աշխատությունում մշակվել և ներկայացվել են միջազգային առևտրի հիմնախնդիրների արդի մոտեցումները[12]: Նշելով տարբեր երկրների համար մրցակցային առավելությունների չորս դետերմինանտները (գործոնների պարամետր, ներքին շուկայում պահանջարկի պարամետր, ազգային և աջակցող ճյուղեր, ֆիրմայի ռազմավարություն, կառուցվածք և մրցակցություն), որոնք ունեն տարբեր համադրություն, Մ.Պորտերը առանձնացնում է երկրի կենսապարբերաշրջանի չորս փուլ[13].

1. Արտադրության գործոնների փուլում երկրները միմյանց հետ մրցակցում են ամենից առաջ ի հաշիվ այն մրցակցային առավելությունների, որոնք կապված են արտադրության գործոնների, ավելի էժան աշխատուժի, ավելի բերքատու հողերի հետ:

2. Ներդրումների փուլում տնտեսության մրցակցությունը հենվում է պետության և ազգային ֆիրմաների ներդրումային ակտիվության վրա: Այս փուլին հասնելու համար վճռական նշանակություն ունի ազգային արտադրողների ունակությունը՝ յուրացնելու և կատարելագործելու օտարերկրյա տեխնոլոգիաները: Ներդրումների ծավալի աճը հանգեցնում է նոր, առաջադիմական գործոնների ստեղծմանը և ժամանակակից ենթակառուցվածքների զարգացմանը:

3. Նորամուծությունների փուլը բնութագրվում է մշտական փոխազդեցության մեջ գտնվող ճյուղերի լայն շրջանակով, մրցակցային առավելությունների բոլոր չորս գործոնների առկայությամբ: Էապես ընդլայնվում է միմյանց հետ մրցակցող ճյուղերի քանակը՝ կապված անձնական եկամուտների, կրթական մակարդակի բարձրացման, բարեկեցության և հարմարավետ կյանքի ձգտման հետ, ինչպես նաև, շնորհիվ ներքին մրցակցության խթանող դերի, սպառողական պահանջարկը ավելի ու ավելի բազմազան է դառնում:

4. Հարստության փուլ: Արտադրության անկում: Տնտեսության շարժիչ ուժն արդեն ձեռք բերված ճոխությունն է: Երկիրը և դրա ֆիրմաները սկսում են միջազգային մրցակցության մեջ իրենց դիրքերը զիջել, ավելի մեծ ուշադրություն է դարձվում սեփական դիրքերի պահպանմանը, ոչ թե ամրապնդմանը: Ընկերությունները նախապատվությունը տալիս են ոչ թե ակտիվ

---

[11] Տե՛ս **Schumpeter Joseph A.**, History of Economic Analysis, 1954, http://digamo.free.fr/schumphea.pdf

[12] Տե՛ս **Porter M. E.,** The Competitive Advantage of Nation, N.Y., 1990.

[13] Տե՛ս **Թադևոսյան Զ.Ա., Գալոյան Դ.Ռ.,** Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղ. հրատ., 2015, էջ 110-111:

ներդրումներին, այլ պահպանողական ռազմավարությանը, որը հենվում է իշխանական մարմինների աջակցության վրա:

Մայքլ Պորտերի վերլուծության անկյունաքարը, կարծում ենք, այն է, որ հարստության փուլում երկրների արտադրությունը աստիճանաբար անկում է ապրում, իսկ ճոխությունը արգելակում է տնտեսական առաջընթացը: Նշված երևույթը հիմնականում բնորոշ է զարգացած երկրներին: Բացի արտադրության անկումից, ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ապրանքների և ծառայությունների գերհագեցվածությունը տնտեսությունում, որը ինքնին ճգնաժամ ծնող պայման է:

Կրթական համակարգերը հիմնականում հասնում են իրենց զարգացման գագաթնակետին, հիմնական ենթակառուցվածքները գտնվում են արդիականացված վիճակում, սոցիալական քաղաքականությունը ընդգրկում է գրեթե բոլոր սոցիալական խավերը՝ մարդիկ ստանում են բարձր կենսաթոշակ և այլևս ձգտում են հիմնականում «անգործության» միջոցով՝ չաշխատելով ապրել: Այսինքն՝ ծուլությունը համատարած բնույթ է կրում, մարդիկ ցանկանում են ավելի շատ ձեռք բերել պատրաստի արտադրանք, քան ստեղծել նորը՝ զբաղվելով գյուղատնտեսությամբ կամ ձեռներեցությամբ: Այս գործընթացը, մեր դիտարկմամբ, նույնպես սպառնալիք է զարգացած երկրների տնտեսության և հասարակության համար, և սույն երևույթը մենք անվանում ենք «շվայտամոլություն»:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար գիտական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան տարբեր հեղինակների՝ տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ Սիսմոնդիի, Ռոդբերտուսի, Մարքսի, Միլի, Մալթուսի, Չոմերսի, Կիրխմանի, Քեյնսի և այլոց՝ տնտեսական ճգնաժամերին և սպառնալիքներին վերաբերող գիտական աշխատությունները: Նշված հետազոտողների՝ տնտեսական ճգնաժամերին և սպառնալիքներին վերաբերող աշխատություններից առանձնացվել են հիմնական թեզերը, դրանք համեմատվել են միմյանց հետ, իրականացվել է ժամանակագրական համակարգված ամփոփում:

Սույն հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է պատմականի և տրամաբանականի ամփոփման վրա, ինչը հնարավորություն է տալիս տնտեսական ճգնաժամերի և տնտեսության արտաքին սպառնալիքների էվոլյուցիան և դրանց ձևավորման վրա ազդող գործոնները համադրելու նմանատիպ այլ գործընթացների հետ: Այս մոտեցումը թույլ է տալիս գոյություն ունեցող տնտեսական սպառնալիքները և դրանց առանձնահատկությունները դիտարկել նաև ներկա ժամանակաշրջանում:

Հետազոտության տեղեկատվական բազան ներառում է Համաշխարհային տնտեսական ֆորումի, վերազգային բանկերի, գլոբալ տնտեսական ինտեգրման միավորների վերլուծաբանների և հետազոտողների՝ համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի առնչությամբ տրված գնահատականներն ու թեզերը: Նշենք նաև, որ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից, սկսած 2006 թվականից, ամեն տարի հրապարակվում է «Համաշխարհային ռիսկերը» վերնագրով զեկույցը, որտեղ ներկայացվում են տվյալ տարվա ընթացքում համաշխարհային տնտեսության առջև ծառացած ռիսկերը և սպառնալիքները: Նախորդ հրատարակություններում հիմնականում շեշտադրվում էր գլոբալ համագործակցության անհրաժեշտությու-

նը՝ հակամանրէային դիմադրողականության պայմանները (8-րդ հրատարակություն, 2013 թ.), Էբոլայի ճգնաժամը (11-րդ հրատարակություն, 2016 թ.), կենսաբանական սպառնալիքները (14-րդ հրատարակություն, 2019 թ.) և գերբեռնված առողջապահական համակարգերը (15-րդ հրատարակություն, 2020 թ.)՝ ի թիվս այլ թեմաների:

Վերլուծություն: Տնտեսական ճգնաժամերն ու տնտեսության առջև ծառացած սպառնալիքները ստացան պարբերական բնույթ և սկսեցին կրկնվել 18-րդ դարից սկսած՝ պայմանավորված նոր ձևավորվող կապիտալիստական հարաբերություններով: Տնտեսական ճգնաժամեր տեղի էին ունենում հիմնականում գյուղատնտեսության ոլորտում, քանի որ տվյալ ժամանակաշրջանում գյուղատնտեսությունը տնտեսության առաջատար ոլորտն էր: Տնտեսական ճգնաժամերը դրսևորվում էին գյուղատնտեսական թերարտադրության տեսանկյունից, իսկ արդեն 19-րդ դարից, երբ սկսեց զարգանալ արդյունաբերական արտադրությունը, դրանք արտահայտվեցին արտադրության և սպառման միջև հավասարակշռության պարբերական խախտումների ձևով[14]:

Դիտարկենք անցյալ դարերում տեղի ունեցած մի շարք տնտեսական ճգնաժամերի առաջացման պատճառները և բնույթը:

- Որպես կապիտալիստական տնտեսական հասարակարգի առաջին ճգնաժամ կարելի է առանձնացնել 17-րդ դարում (1634-1637 թթ.) Հոլանդիայում տեղ գտած տնտեսական ճգնաժամը, որը պատմության մեջ հայտնի է «Կակաչների ճգնաժամ» անվանմամբ[15]: Ճգնաժամի առաջացման հիմնական պատճառը կապվում է այն փաստի հետ, որ այդ ժամանակահատվածում մեծ հանրաճանաչություն ունեին կակաչները, և մարդիկ ծաղիկների սերմերը գնելու նպատակով (որոնց գինը, ըստ նրանց կանխատեսումների, պետք է բարձրանար) պատրաստ էին վաճառել նույնիսկ իրենց ողջ ունեցվածքը: Սակայն հետագայում, երբ այդ սպասելիքները չարդարացան, երկրում բարդ ու ծանր տնտեսական և ֆինանսական վիճակ ստեղծվեց:
- Կապիտալիստական հաջորդ ճգնաժամը տեղի ունեցավ 18-րդ դարի սկզբներին՝ 1720 թվականին, Ֆրանսիայում, որպես ֆինանսական ճգնաժամ, որն առաջացել էր այդ ժամանակաշրջանի Ֆրանսիայի գլխավոր գանձապետի՝ Ջոն Լոյի սխալ հաշվարկած գործողությունների հետևանքով[16]: Ֆրանսիայի հսկայական չափերի հասած պարտքը մարելու նպատակով գանձապետը սկսեց մեծ քանակությամբ փող տպել, և արդեն իսկ արժեզրկված փողերի հսկայական զանգվածը երկրում հանգեցրեց հիպերինֆլյացիայի, ինչն էլ, իր հերթին, ֆինանսական ճգնաժամի պատճառ դարձավ:
- Միջազգային բնույթի առաջին խոշոր ճգնաժամը համարվում է 1825 թվականին Անգլիայում տեղ գտած ճգնաժամը, որը մասամբ անդրադարձավ նաև այլ երկրների տնտեսությունների վրա[17]: Իր ժամանակի չափանիշներով այս ճգնաժամը համարվեց համաշխարհային, քանի որ ընդգրկեց բոլոր այն

---

[14] Տե՛ս **Սարգսյան Կ.,** Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 96:

[15] Տե՛ս նույն տեղը:

[16] Տե՛ս նույն տեղը:

[17] Տե՛ս **Гринин Л. Е.**, Об истории экономических кризисов // Глобальный кризис как кризис перепроизводства денег. «Философия и общество», № 1, 2009, էջ 5:

երկրները, որտեղ գերիշխում էր կապիտալիստական արտադրաեղանակը: Ընդ որում, սա կարելի է համարել նաև առաջին ֆինանսատնտեսական ճգնաժամ: Վերջինիս առաջացման նախապայման հանդիսացավ այն, որ անգլիացի շատ ներդրողներ մեծածավալ ներդրումներ էին կատարում լատինամերիկյան երկրներում շահագործվող թանկարժեք մետաղների հանքավայրերում, և ստացված թանկարժեք մետաղներն իրացվում էին Լոնդոնի ֆոնդային բորսայում[18]: Այս գործընթացն ուղեկցվում էր նաև ապրանքների արտահանման աճով: Անգլիայի բանկի ոսկու պաշարների կրճատումը և առևտրային հաշվեկշռի անհավասարակշռությունը ստիպեցին բանկին 1825 թվականին բարձրացնել զեղչման տոկոսադրույքի մակարդակը: Սրան հաջորդեցին ֆոնդային շուկայում խուճապը և ֆինանսական ճգնաժամը, որն արագորեն տարածվեց այլ երկրներում՝ հատկապես Ֆրանսիայում, իսկ այնուհետ տեղափոխվեց նաև ամերիկյան մայրցամաք՝ Լատինամերիկյան երկրներ և ԱՄՆ[19]:

- 1857-1858 թվականների ճգնաժամը ևս իր բնույթով միջազգային էր և բավական ուժեղ հարված հասցրեց այդ ժամանակաշրջանի զարգացած երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսություններին: Այս ճգնաժամը հաճախ անվանում են «Կ.Մարքսի սիրած ճգնաժամ», քանի որ հենց այդ ճգնաժամը նախանշեց կապիտալիզմի անխուսափելի կործանման տնտեսական մոդելի կառուցումը:
- 20-րդ դարի առաջին ճգնաժամը տեղի ունեցավ 1907 թվականին: Նշված ժամանակաշրջանի համար այն համարվեց ամենածանրն ու տարածքային ընդգրկվածությամբ ամենամեծը: Այս ճգնաժամի ազդեցությունը ներառեց 9 երկիր: Վերջինիս հիմնական պատճառը Անգլիայի բանկի վարած կոշտ դրամավարկային քաղաքականությունն էր, մասնավորապես՝ զեղչման տոկոսադրույքի կտրուկ բարձրացումը 1906 թվականին՝ 3.5-ից մինչև 6%[20]: Սրա նպատակը Անգլիայի ոսկու պաշարների համալրումն էր, ինչն էլ բերեց ԱՄՆ-ից կապիտալի զգալի արտահոսքի և հանգեցրեց Նյու Յորքի ֆոնդային շուկայի փլուզմանը: Ֆինանսական ճգնաժամի պատճառով Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների տնտեսություններ մտան բարդ և երկարատև ռեցեսիոն փուլ: Այս առաջին մասշտաբային ֆինանսական ճգնաժամը հաղթահարվեց մի շարք նպատակային գործողությունների իրականացման արդյունքում: Այդ գործողությունները ձեռնարկվեցին ոչ թե կառավարությունների, այլ Ջ. Մորգանի և մի խումբ ֆինանսիստների կողմից: Մինչ այդ, ճգնաժամերի առաջացման պարագայում գործողություններ չէին կատարվում կառավարությունների կողմից. ուղղակի պետք էր սպասել, մինչև ճգնաժամն ինքն իրեն ավարտվի: 1907 թվականը նշանավորվեց նաև նրանով, որ առաջին անգամ մշակվեցին և գործադրվեցին հակաճգնաժամային միջոցառումներ, ինչն էլ հիմք հանդիսացավ հետագայում ճգնաժամերը հաղթահարելու նպատակով տնտեսական քաղաքականության շրջանակներում գործնական նոր մեխանիզմների կիրառման համար:

---

[18] Տե՛ս **Սարգսյան Կ,** նշվ. աշխ., էջ 97:
[19] Տե՛ս նույն տեղը:
[20] Տե՛ս նույն տեղը, էջ 100:

- 1929-1933 թթ. բռնկվեց 20-րդ դարի, ինչպես նաև կապիտալիստական ժամանակաշրջանի թերևս ամենամեծ և ամենաաղետալի ճգնաժամը[21]: Այս ճգնաժամի կամ «Մեծ լճացման» արդյունքում, փաստորեն, ստեղծվեցին տնտեսության պետական կարգավորման արդի մոդելը և ժամանակակից տնտեսագիտական հիմնական ուղղություններից մեկը՝ քեյնսականությունը: 1929 թվականի հոկտեմբերի 24-ին, որը պատմության մեջ մնաց «Սև հինգշաբթի» անվամբ, Նյու Յորքի ֆոնդային բորսայում տեղի ունեցավ արժեթղթերի փոխարժեքների կտրուկ անկում՝ ընդհուպ մինչև 70%[22]: Վերջինս մեծ իրարանցում առաջացրեց և հանգեցրեց ակտիվների գների էլ ավելի արժեզրկման. արժեթղթերի սեփականատերերի կրած վնասները կազմեցին շուրջ 15 մլրդ ԱՄՆ դոլար: Փակվեցին խոշոր ֆինանսական ընկերություններ և արտադրություններ, գործազրկության մակարդակը հասավ հսկայական չափերի, որն էլ բացասաբար ազդեց զարգացած կապիտալիստական երկրների տնտեսությունների վրա: Ճգնաժամի ընթացքում արդյունաբերական ԱՄՆ-ում արտադրությունը կրճատվեց շուրջ 46%-ով, Մեծ Բրիտանիայում՝ 24%-ով, Ֆրանսիայում՝ 32%-ով, Գերմանիայում՝ 41%-ով[23]: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1933 թվականի դրությամբ զարգացած 32 կապիտալիստական երկրներում գործազուրկ ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 30 մլն: Ճգնաժամի բացասական ազդեցությունները դրսևորվում էին ընդհուպ մինչև 1933 թվականը, սակայն հետագայում մի քանի տարի ևս դրանք դեռ զգացվում էին[24]:
- Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին ճգնաժամը տեղի ունեցավ 1957 թվականին՝ ընդգրկելով ԱՄՆ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի և Նիդեռլանդների տնտեսությունները: Այս ճգնաժամը տևեց շուրջ մեկուկես տարի, որի ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալները նշված երկրներում կրճատվեցին մոտ 4%-ով, իսկ գործազուրկների թիվը հասավ մինչև 10 միլիոնի[25]:
- Հաջորդ խոշոր ճգնաժամը տեղի ունեցավ ԱՄՆ-ում՝ 1973 թվականին[26], որը, նախորդների հետ համեմատած, ավելի խորն էր և ավերիչ: Որոշ ցուցանիշների գծով այս ճգնաժամը մոտ էր «Մեծ դեպրեսիային»: Դրա հետևանքով ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 13%-ով, Գերմանիայինը՝ 22%-ով, Ճապոնիայինը՝ 20%-ով, Անգլիայինը՝ 10%-ով, Ֆրանսիայինը՝ 13%-ով, Իտալիայինը՝ 14%-ով[27]: Սնանկացող ընկերությունների թիվը 1973 թվականի համեմատությամբ 1974 թվականին սկսեց աճել. Անգլիայում կազմեց մինչև 47%, Ճապոնիայում՝ 42%, իսկ Գերմանիայում՝ 40%: Զարգացած մյուս կապիտալիստական երկրներում այս ցուցանիշը

---

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 101:
[22] Տե՛ս նույն տեղը, էջ 102:
[23] Տե՛ս նույն տեղը:
[24] Տե՛ս **Հարությունյան Վ.Լ., Սարգսյան Կ.Ս.,** Ճգնաժամերի վերլուծությունը՝ համաշխարհային տնտեսության զարգացման տարբեր փուլերում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 1), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Եր., 2013, էջ 10–15:
[25] Տե՛ս նույն տեղը:
[26] Տե՛ս **Սարգսյան Կ.,** նշվ. աշխ., էջ 103:
[27] Տե՛ս նույն տեղը:

փոքր-ինչ ավելի մխիթարիչ էր, մասնավորապես՝ ԱՄՆ-ում ընդամենը 6% էր կազմում[28], գործազուրկների թիվը նույնպես զգալիորեն աճեց: Այս ճգնաժամի հետևանքով 1975 թվականին գործազուրկների ընդհանուր թիվը զարգացած կապիտալիստական երկրներում կազմեց շուրջ 15 միլիոն մարդ, իսկ մոտ 10 միլիոն մարդ տեղափոխվեց ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքի կամ ժամանակավորապես ազատվեց աշխատանքից[29]:

1973 թվականին սկսվեց առաջին խոշորագույն էներգետիկ ճգնաժամը՝ կապված միջազգային շուկայում նավթարդյունահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալների կտրուկ նվազեցման հետ, որի նպատակն էր նավթամթերքի գնի բարձրացումը: Այսպես՝ եթե 1973 թվականի ընթացքում նավթի մեկ բարելի գինը 3 ԱՄՆ դոլարից հասավ մինչև 5 ԱՄՆ դոլարի, ապա 1974 թվականին արդեն 12 ԱՄՆ դոլար էր[30]:

Պատմականորեն արձանագրված ճգնաժամերի շարքում իր ուրույն տեղն ունի 2008–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական խոշորածավալ ճգնաժամը, որը հետագայում վերածվեց տնտեսական ճգնաժամի: Դա Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր ամենախոր և ամենամասշտաբային ճգնաժամն է համարվում: Ֆինանսական շուկաների և ինստիտուտների սերտ փոխկապվածության և գլոբալ տնտեսական ինտեգրման բարձր մակարդակի պայմաններում ճգնաժամը հիպոտեկային շուկայից արագորեն տարածվեց տարբեր շուկաներ և երկրներ[31]: Փլուզվեցին մի շարք գերխոշոր ֆինանսական ինստիտուտներ, վնասվեցին բազմաթիվ երկրների ֆինանսական համակարգեր: Ֆինանսական հատվածն արժեթղթերի շուկայի միջոցով ստիպեց համապատասխան վերադասավորումներ կատարել իրական հատվածում, որն էլ դարձավ տնտեսական ճգնաժամի պատճառը[32]: Արդյունքում՝ համաշխարհային հանրության կողմից դիտարկված ճգնաժամը 2008 թվականի երկրորդ կեսին արդեն իրականություն դարձավ: ԱՄՆ-ի շուկաներում սկիզբ առած ֆինանսական ճգնաժամը վերափոխվեց տնտեսականի և ընդգրկեց ամբողջ աշխարհը: Աշխարհում գրանցվեց տնտեսական աճի դանդաղում, իսկ 2009 թվականին արձանագրվեց անկում: Անկումն առավել խորն էր զարգացած երկրներում (շուրջ 3.8%): 2008 թվականի ֆինանսական ճգնաժամն իր բնույթով՝ խորությամբ, ընդգրկման չափերով, դրսևորման ձևերով և դինամիկայով, տարբերվում էր նախորդ դարերի ճգնաժամերից: Դա նման չէր ինչպես 1929 թվականի «Մեծ դեպրեսիային», այնպես էլ 20-րդ հարյուրամյակի երկրորդ կեսի ճգնաժամերին (1970-ական թթ. էներգետիկ ճգնաժամ, 1992 թ., 2001 թ. ճգնաժամեր, 1997 թ. ասիական ճգնաժամ, 1998 թ. ռուսաստանյան դեֆոլտ)[33]: Այս ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները պետք է դիտարկել համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող որակապես նոր կառուցվածքային փոփոխություններով, որոնք կարող էին ներգործություն

---

[28] Տե՛ս նույն տեղը:
[29] Տե՛ս նույն տեղը:
[30] Տե՛ս **Հարությունյան Վ.Լ., Սարգսյան Կ.Ս.,** նշվ. աշխ., էջ 10-15:
[31] Տե՛ս **Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ.,** Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ, մաս II, Եր., ԵՃՇՀ, 2012, էջ 584:
[32] Տե՛ս նույն տեղը, էջ 585:
[33] Տե՛ս նույն տեղը:

ունենալ տնտեսական համակարգերի վրա և հանգեցնել ճգնաժամի, մասնավորապես՝

- առաջին հերթին, պետք է նշել ֆինանսական հատվածի ծառայությունների ոլորտի գերարագ աճի տեմպը,
- երկրորդ պատճառը տնտեսության մյուս բնագավառների համեմատությամբ ֆինանսական ոլորտի անվիճելի առավելությունն է. արժեթղթերի շուկայի կարգավորման համապարփակ մեխանիզմի բացակայությունը, տնտեսության այդ հատվածում նվազագույն պետական միջամտությունը, պակաս պատասխանատվությունը, հիմնավորվածությունը, շարժունության մեծ պահանջը[34],
- երրորդ պատճառը ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգի տոկոսադրույքի ակտիվ քաղաքականությունն էր և պետական արժեթղթերի՝ որպես նոր ապրանքի ձևավորման գործընթացը, որոնք հնարավորություն տվեցին երկիր վերադարձնել այն միջոցները, որ դուրս էին հոսել վճարային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի և ամերիկյան տնտեսության մրցունակության անկման պատճառով[35],
- ճգնաժամի հաջորդ պատճառը նորարարական տեխնոլոգիաների չափազանց մեծ կուտակումն էր զարգացած երկրներում. այսինքն՝ զարգացող և զարգացած երկրների միջև տեխնոլոգիաների կուտակման խզվածքը շատ մեծ էր:

Անդրադարձ կատարելով անցյալի խոշոր ճգնաժամերի տեսական վերլուծություններին, առաջացման պատճառներին ու բնույթին՝ ներկայացնենք նաև 2020 թվականին կորոնավիրուսային համավարակով պայմանավորված համաշխարհային խոշոր տնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներն ու մի քանի առանձնահատկություններ:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2006 թվականի զեկույցում ներկայացված են տվյալ տարվա ընթացքում համաշխարհային տնտեսության առջև ծառացած ռիսկերը և սպառնալիքները: Զեկույցում նշվում է, որ աշխարհում ահագնանում են համաճարակների և առողջապահության ոլորտի հետ կապված ռիսկերը: 2021 թ. զեկույցը պարունակում է նախազգուշացում այն մասին, որ «մահացու գրիպը, որի տարածումն արագանում է ճանապարհորդությունների պատճառով և չի սահմանափակվում նախազգուշացման բավարար մեխանիզմներով, սուր սպառնալիք է մարդկության համար»[36]: Համաճարակի տարածումը հանգեցնում է ճանապարհորդության, զբոսաշրջության և այլ ծառայությունների մատուցման, ինչպես նաև արտադրական և մատակարարման գլոբալ արժեթղթերի խիստ անկման, իսկ համաշխարհային առևտուրը, ներդրողների ռիսկի գնալը և սպառման պահանջարկը երկարաժամկետում մեծ վնասներ են կրում[37]: Զեկույցում ներկայացվեց համաճարակի տարածման առավել ահագնացող սցենարը, որը

---

[34] Տե՛ս նույն տեղը, էջ 587:

[35] Տե՛ս նույն տեղը, էջ 588:

[36] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորում, «Համաշխարհային ռիսկերը. 2021» զեկույց, էջ 5, http://www3.weforum.org/docs/WEF_The_Global_Risks_Report_2021.pdf

[37] Տե՛ս նույն տեղը:

ցույց տվեց նաև ինֆոդեմիկայի[38] ուժեղացման դերը հիմնական ռիսկերը սրելու գործում[39]:

2020 թ. գլոբալ համավարակի վտանգը սկսեց տարածվել ամբողջ աշխարհում: Սրա շրջանակներում է Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ ռիսկերի զեկույցի 16-րդ հրատարակությունը: Վերլուծությունը հիմնականում կենտրոնացած է անհավասարության և սոցիալական հատվածավորման ընդլայնման ռիսկերի և հետևանքների վրա: Որոշ երկրներում արդեն գոյություն ունեցող սոցիալական տարբերություններն ընդգծվել են, ինչը հանգեցրել է սոցիալական պաշտպանության թույլ համակարգերի և տնտեսական կառույցների չափազանց բարձր լարվածության[40]:

Հասարակության աճող հատվածավորումը, որն արտահայտվում է մարդու առողջությանն առնչվող կայուն և անընդհատ ի հայտ եկող ռիսկերով, գործազրկության աճով, թվային տարածայնությունների խորացմամբ և երիտասարդների հուսախաբությամբ, կարող է ծանր հետևանքներ ունենալ տնտեսական, բնապահպանական, աշխարհաքաղաքական և տեխնոլոգիական բարդ ռիսկերի այս դարաշրջանում[41]: «Ունևորների» և «չունևորների» միջև ճեղքվածքն էլ ավելի կմեծանա, եթե տեխնոլոգիաների հասանելիությունն ու կարողությունները շարունակեն անհամապատասխան բաշխված մնալ[42]:

Բիզնեսին վերաբերող ներկայիս տնտեսական և տեխնոլոգիական ճնշումները հղի են այնպիսի ռիսկերի առաջացմամբ, որոնք սպառնում են ստեղծել ընկերությունների մեծ խմբեր՝ հետ պահելով դրանք ապագայի շուկաներից[43]:

Երկրների կառավարությունները ևս պետք է նվազեցնեն համավարակի կառավարման և տնտեսական անկման միջև առաջացած խզումները՝ միաժամանակ ստեղծելով նոր հնարավորություններ, որոնք հիմնարար նշանակություն կունենան բնակչության սոցիալական համախմբվածության և կենսունակության, ինչպես նաև տնտեսության կայուն զարգացման համար[44]:

Գերմանական «Դոյչե բանկը» նույնպես կանխատեսել է հաջորդ տասնամյակի համաշխարհային տնտեսության համար «մահացու» սպառնալիքները: Դրանք նշված են վարկային հաստատության ուսումնասիրության մեջ՝ իրադարձությունների զարգացման չորս հնարավոր սցենարների տեսքով:

Համաձայն առաջին սցենարի՝ աշխարհում տեղի է ունենալու նոր համավարակ, ըստ երկրորդ սցենարի՝ համաշխարհային տնտեսությանը սպառնում է Հրաբխի պայթյունավտանգության ինդեքսով (ՀՊԻ-7)[45] ամենաուժեղ

---

[38] Ինֆոդեմիկան «տեղեկատվություն» և «համաճարակ» բառերի համակցությունն է, որը սովորաբար վերաբերում է ինչպես ճշգրիտ, այնպես էլ ոչ ճշգրիտ տեղեկատվության արագ տարածմանը ինչ-որ բանի, օրինակ՝ հիվանդության վերաբերյալ:

[39] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորում, «Համաշխարհային ռիսկերը. 2021» զեկույց, էջ 5, http://www3.weforum.org/docs/WEF_The_Global_Risks_Report_2021.pdf

[40] Տե՛ս նույն տեղը:

[41] Տե՛ս նույն տեղը:

[42] Տե՛ս նույն տեղը:

[43] Տե՛ս նույն տեղը:

[44] Տե՛ս նույն տեղը:

[45] Տե՛ս https://www.usgs.gov/media/images/volcanic-explosivity-index-vei-a-numeric-scale-measures-t

հրաբխային ժայթքումը (մոխրի արտանետումների ծավալը կգերազանցի 100 խորանարդ կիլոմետրը): Երրորդ և չորրորդ սցենարները ենթադրում են արևի հզոր բռնկում և համաշխարհային պատերազմի սկիզբ[46]:

Հավանականությունը, որ այս սցենարներից որևէ մեկը կյանքի կկոչվի մինչև 2030 թվականը, ըստ «Դոյչե բանկի», 33% է: Ըստ վարկային հաստատության՝ 2020 թվականը, որպես կորոնավիրուսային համավարակով պայմանավորված ճգնաժամի օրինակ, արդեն ապացուցել է, թե որքան կործանարար կարող է լինել համաշխարհային համավարակը[47]:

Երկրորդ սցենարով գերմանական բանկը հիշեցնում է իսլանդական էյջաֆալալայոկուլ հրաբխի ժայթքումը, որը հարվածեց տնտեսությանը և խաթարեց օդային երթևեկությունը Հյուսիսային Եվրոպայում: Միևնույն ժամանակ, փորձագետները նշել են, որ այս ժայթքումը թույլ է՝ համեմատած ՀՊԻ-7 կատեգորիայի հետ: Վերջին անգամ Ինդոնեզիայում հզոր ժայթքում է տեղի ունեցել 1815 թվականին, որը տասնյակ հազարավոր զոհերի պատճառ է դարձել[48]:

Անդրադառնալով արեգակնային բռնկման սպառնալիքին՝ փորձագետները նշում են, որ դա կարող է լուրջ վնաս հասցնել ժամանակակից ենթակառուցվածքներին, որոնք հիմնված են էլեկտրական կայանների վրա[49]: Որպես օրինակ բերվում է 1859 թ. տեղի ունեցած Կարինգթոնի իրադարձությունը (գեոմագնիսական փոթորիկ). բռնկումը հանգեցրել է ամբողջ Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում հեռագրական համակարգերի խափանմանը[50]: «Դոյչե բանկում» համաշխարհային պատերազմի սցենարը համարվել է ամենաքիչ հավանականը, սակայն լիովին չի բացառվել[51]:

Տնտեսական ցանկացած ճգնաժամ ունի իր առանձնահատկությունները և պահանջում է հատուկ ու համարժեք լուծման ուղիների առաջադրում: Մեկ ընդհանրական հատկանիշով բնութագրելով բոլոր տնտեսական ճգնաժամերը՝ կարելի է նշել, որ դրանք միանման են և ծագում են տնտեսական հավասարակշռության խախտման հետևանքով: Դրանց հաղթահարումը անմիջականորեն կապված է նոր հավասարակշռության սահմանման հետ, սակայն այդ կանոններն ու պայմանները մեծ մասամբ կարող են տարբերվել նախորդ հավասարակշռության պայմաններից: Այդ տարբերությունն էլ հենց բնորոշում է ճգնաժամի էությունը և կառուցվածքը, խորությունը և թույլ է տալիս մշակել հակաճգնաժամային միջոցառումներ դրանք հաղթահարելու համար: Սակայն համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամն իր տեսակով յուրահատուկ է:

Միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների կողմից հատկապես այս սպառնալիքի վերաբերյալ տրված գնահատականները նույնպես փաստում են, որ վերջինս ունի առանձնահատկություններ, որոնք, մասնավորապես, ուղեկցվում են մարդկային հսկայական կորուստներով,

---

[46] Տե՛ս https://lenta.ru/news/2020/06/19/4scenario/
[47] Տե՛ս նույն տեղը:
[48] Տե՛ս նույն տեղը:
[49] Տե՛ս նույն տեղը:
[50] Տե՛ս նույն տեղը:
[51] Տե՛ս նույն տեղը:

տնտեսությունների համատարած անգործությամբ, ձեռնարկությունների հարկադրված պարապուրդով, տնտեսական անկմամբ և համավարակի հաղթահարման ժամկետների անորոշությամբ: Հաշվի առնելով, որ համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամն իր բնույթով իրապես յուրահատուկ է և նման չէ անցյալի ճգնաժամերին, հարկ է նշել, որ սրա հաղթահարման ուղիները ևս տարբերվում են նախկինում իրականացված հակաճգնաժամային քաղաքականությունից:

Նախկինում ճգնաժամերի առաջացումը պայմանավորված էր տնտեսությունում տեղի ունեցող անկումներով կամ համակարգային փոփոխություններով: Մեր գնահատմամբ՝ համավարակով պայմանավորված այս ճգնաժամը «արհեստածին» է: Այլ կերպ ասած՝ տնտեսությունում տեղի ունեցան արհեստական գործընթացներ, մասնավորապես՝ ձեռնարկությունները համատարած փակվեցին, արտահանումն ու ներմուծումը, բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումները որոշակի ժամանակով դադարեցվեցին, զբոսաշրջային հոսքերը գրեթե զրոյացան, կրթությունն ամբողջապես դարձավ հեռավար: Ուստի, մեր կանխատեսմամբ, սրա վերականգնման տեմպերը կլինեն շատ ավելի արագ, քան, օրինակ՝ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տեմպերն էին, քանի որ վերոշարադրյալ խնդիրների լուծումներն ավելի դյուրին են՝ ի տարբերություն համակարգային ճգնաժամերի առաջացրած խնդիրների:

Եզրակացություններ: Այսպիսով՝ ուսումնասիրելով տնտեսական ճգնաժամերի առաջացման պատճառները, կատարել ենք մի քանի եզրակացություն.

1. Նախորդ դարի տնտեսական ճգնաժամերը կրում էին մասշտաբային սպառնալիքներ, ինչն էլ պահանջում էր դրանց հաղթահարման ուղիների և մեխանիզմների բացահայտում ու մշակում: Որոշակի ժամանակահատվածում այս մոտեցումն ընդունելի է, երբ խոսքը վերաբերում է տնտեսական պարբերաշրջանին, այսինքն՝ տնտեսությունում կրկնվող, պարբերական հիմնախնդիրներին: Այլ կերպ ասած՝ ճգնաժամերի հաղթահարման համար կիրառելի չեն նախորդ տարիներին մշակված՝ ճգնաժամերը հաղթահարելու մեթոդները: Ժամանակի ընթացքում առաջ են գալիս նոր հիմնախնդիրներ, բարդ և անկանխատեսելի են դառնում ճգնաժամի տարածման հաղթահարման մեթոդներն ու մեխանիզմները:

2. «Համակարգային ճգնաժամերի» ընթացքում տեղի է ունենում սոցիալ-տնտեսական համակարգերի կարգավորման մոդելների փոփոխություն: Օրինակ՝ 1930-ական թվականների ճգնաժամերի հաղթահարումից հետո ավարտվեց «անտեսանելի ձեռքի» ժամանակաշրջանը, և հաստատվեց «մեծ պետության» գաղափարախոսությունը, ըստ որի՝ դա պետք է ուղեկցվի հարկերի, բյուջետային ծախսերի, պետական սեփականության, իսկ առանձին դեպքերում նաև պետական գնագոյացման աճով: 1970-ական թվականների ճգնաժամը, ընդհակառակը, հանգեցրեց տնտեսության ազատականացման և ապակարգավորման, հարկերի նվազեցման և պետական գույքի մասնավորեցման, այսինքն՝ տնտեսության զարգացման տեխնոլոգիական փուլին անցնելու հիմքը դարձավ:

3. «Համակարգային ճգնաժամը» միաժամանակ պարբերական է (ցիկլային) և կառուցվածքային: Վերջինս կոռելացված է ինստիտուցիոնալ, տեխ-

նոլոգիական և դրա բազայի փոփոխությունների հետ, որոնք տնտեսությանը հնարավորություն են տալիս աճելու արագ տեմպերով՝ որակապես նոր մակարդակի բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը: Գիտության զարգացումը, գիտանորարարական արտադրանքների թողարկումը, նորագույն տեխնոլոգիաների զարգացումը և դրանց արդիականացումը կարևորագույն պայման են ճգնաժամից հաջողությամբ դուրս գալու համար:

4. Համավարակի տարածման առավել ահագնացող տեմպի սպառնալիքի համատեքստում ընդլայնվում է նաև ինֆոդեմիկայի, այսինքն՝ ինչպես ճշգրիտ, այնպես էլ ոչ ճշգրիտ տեղեկատվության արագ տարածումը, օրինակ՝ վարակվածների թվի մեծացման, պատվաստանյութերի բացասական ազդեցության վերաբերյալ:

5. Համավարակով պայմանավորված՝ տնտեսությունների լոքդաունի ընթացքում տնտեսական աճը չի պահպանվի, եթե առաջատար երկրները չշարունակեն խթանել տնտեսության զարգացումը: Բիզնեսին աջակցելու անհրաժեշտ միջոցները նույնպես աստիճանաբար սպառվում են, արդյունքում՝ աշխատանքի շուկայում բացասական փոփոխություններ են տեղի ունենում, և աշխատողները կորցնում են իրենց աշխատանքը, սակայն այս գործընթացի տեմպերը շատ արագ կարելի է զսպել, քանի որ դա համակարգային բնույթ չի կրում:

Օգտագործված գրականություն

1. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ., Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ, մաս II, Եր., ԵՃՇՀ, 2012:
2. Հարությունյան Վ.Լ., Սարգսյան Կ.Ս., Ճգնաժամերի վերլուծությունը՝ համաշխարհային տնտեսության զարգացման տարբեր փուլերում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 1), Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2013:
3. Թադևոսյան Զ.Ա., Գալոյան Դ.Ռ., Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղ. հրատ., 2015:
4. Սարգսյան Կ., Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016:
5. Համաշխարհային տնտեսական ֆորում, «Համաշխարհային ռիսկերը. 2021» զեկույց, http://www3.weforum.org/docs/WEF_The_Global_Risks_Report_2021.pdf
6. Isaac Illyich Rubin, Sismondi as a Critic of Capitalism, Chapter 37 in A History of Economic Thought, InkLinks, London, 1979.
7. Sismonde de Sismondi J. C. L., New Principles of Political Economy: Of Wealth in Its Relation to Population Trans. Richard Hyse, Transaction Publishers, Rutgers - The State University, New Brunswick, New Jersey, 1991.
8. Joseph A., Schumpeter History of Economic Analysis Allen & Unwin, 1954.
9. Karl Marx, Capital, vol. III.

10. Mattick P., The Limits of the Mixed Economy, part 2. Marx & Keynes. 1969.
11. Porter M. E., The Competitive Advantage of Nation, N.Y., 1990.
12. Rosdolsky R., The Making of Marx's Capital, 1980.
13. Samezō Kuruma, 1929.
14. http://digamo.free.fr/schumphea.pdf
15. https://lenta.ru/news/2020/06/19/4scenario/
16. https://www.if24.ru/ekonomisty-nazvali-ugrozy-mirovoj-ekonomike/
17. https://www.marxists.org/archive/kuruma/crisis-intro.htm
18. https://www.marxists.org/archive/mattick-paul/1969/marx-keynes/ch02.htm
19. https://www.researchgate.net/publication/277650696_PHILIP_KAY_ROME'S_ECO,NOMIC_REVOLUTION_OXFORD_STUDIES_ON_THE_ROMAN_ECONOMY_OXFORD_UNIVERSITY_PRESS_2014
20. https://www.usgs.gov/media/images/volcanic-explosivity-index-vei-a-numeric-scale-measures-t
21. https://www.weforum.org/agenda/2019/03/the-top-10-risks-to-the-global-economy-according-to-the-economists-intelligence-unit/

ГАМЛЕТ МКРТЧЯН
Аспирант кафедры
международных экономических отношений АГЭУ

Критический анализ различных подходов к оценке вызовов в мировой экономике.– Мировое сообщество в течение последних 1-2 лет столкнулось с глубокой кризисной ситуацией, основной причиной которой является новая пандемия. Для этого кризиса характерны как экономические, так и социально-психологические последствия. Последний был результатом повсеместного «локдауна», что, помимо экономических проблем, привело также к социальной изоляции общества и ограничению некоторых свобод. В этом контексте глобальный кризис, возникший вследствие пандемии, по своему характеру отличается от угроз, стоявших перед человечеством в прошлом, учитывая, что он включает различные экономические, социальные, морально-психологические проблемы.

В данной статье представлены теоретические подходы к экономическим кризисам и угрозам прошлых веков, дана их итоговая оценка. Также проанализированы и представлены мнения экспертов и теоретиков международных финансово-экономических организаций относительно нынешнего катастрофического кризиса.

Ключевые слова: *мировая экономика, пандемия, угрозы, экономические кризисы, мировой финансовый кризис.*
JEL: F00, F49
DOI: 10.52174/1829-0280_2021_3_98

HAMLET MKRTCHYAN
PhD Student of the Chair of International Economic Relations of ASUE

Critical Analysis of Different Approaches to Assessing Challenges in the Global Economy.– Over the past 1-2 years, the world community has faced a deep crisis situation, the main cause of which is a new pandemic. This crisis is characterized by both economic and socio-psychological consequences. The latter was the result of widespread "lockdown", which, in addition to economic problems, also led to the social isolation of society and the restriction of certain freedoms. In this context, the global crisis that has emerged as a result of the pandemic is different in nature from the threats facing humanity in the past, given that it includes various economic, social, moral and psychological problems.

This paper deals with the theoretical approaches of economic crises and threats of the past centuries, and gives their

final assessment. At the same time, the opinions of experts and theorists of international financial and economic organizations that relate to the current catastrophic crisis are analyzed and presented.

Key words. *world economy, pandemic, threats, economic crises, global financial crisis.*
JEL: F00, F49
DOI: 10.52174/1829-0280_2021_3_98